ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 757-Ա « 30 » հունիսի 2025թ.

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/244» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից ներկայացված դրոշների գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/244» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Կ. Մելքոնյան	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Կ. Հակոբյան	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
Գ. Խաչատրյան	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի տնտեսվար

2. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Ն.Ղազարյանին:

3. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ. 1, հ. 123 սենյակ):

4.Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ